

թիւնն տանի՝ մուշքն, և յամբարն և կղերմունն: Եւ պազրպանեն՝ հոգի զգաստութեան և զգայու: Թեան զէն կու առնէ, և զիր չարութիւն տանի սալիխան, և անիտոն, մազտաքէն, տարչիխն, օնպուլն, և այս թըտպորմի խառնէ որ զէն չառնէ: Եւ կան այլ դեղեր՝ որ նստատեղին զէն կու առնեն, որպէս սապուն, որ՝ մուղլ խառնել կու պիտի: Եւ կան այլ դեղեր, որ սուր են աղեաց զէն կու առնեն, զայն երբ տան՝ նայ՝ քիթոյ խառնել կու պիտի: Եւ սակամոնին ստամոքին զէն կու առնէ, զայն՝ անիտոնով տուր և պղպղղ, և խէրպուէ խառնէ: Եւ սորընճանն՝ զկերակուր ուզենալն խափանէ: Եւ թէ զինքն զատ ուտեն զմկունքն պնդէ, պարտ է որ յինքն՝ մազտաքէ և դաղձ, և յօտ խառնեն, և ի յայն մկունքն որ պնդեր է՝ մուժ ըտողան օծնէ՝ որ զպնդու: Թիւն տանի Եւ թրպուրթն մէն օգտութիւն չի առներ, և իր բնութիւն այն է որ զգիճութիւն կու քարչէ՝ քայց չի կարէր լուծէր մինչև զանճապիլ չի խառնեն որ իր գիճութենով լուծէ: Այլ և զայս գիտացիր՝ որ զայս դեղորանքո՝ կէսք մի փորձելով զտան, և կէս մի յերազի տեսան և իմացան և ըստուզեցին, և կէս մի կարծեօք իմացան՝ իմաստութեամբ զաստիճանն և զխառնուիլն որ խառնեն զգեղորանքն որ զմէկ մէկի ուժ յաւելցնէ, և կամ զսուր դեղերոյն զահրն պակսեցնէ որ զէն չիառնէ, զի ցաւերն կան որ հակառակ են՝ որ լինի ի տաքութենէ և ի չորութենէ, զայն պիտի որ հովցնեն զտաքութիւն, և զչորութիւն զիճացնեն, որ հաւասարի տարեւրաց: Կամ լինի ի հովութենէ և ի գիճութենէ, պիտի որ տաքեցնեն և պնդեն: Թէ հով և չոր է, դեղն տաք և զէն պիտի. թէ տաք և զէն է, հովցնել պիտի, և զգիճութիւն պակսեցնել: Եւ դեղերուն ուժովն այլ այս, դ. մաղձէս է, և դ. տարերարց, և, դ. տարածայէ, և մէկ մէկի հակառակ է: Այսպէս զոր յիշեցի պարտ է գիտել և փորձել զբնութիւն և զպատճառ ցաւոյն իմա՝ նալ, և զցաւն հակառակովն բժշկիլ:

(Շարուճակելի)

ՏՈՒՌ. ՎԱՆՐԱՄ Բ. ԹՈՐԳԱՍԵԱՆ



ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԼԵԶՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԱՌԱՋԻՆ ՔԵՐԱԿԱՆՆԵՐ

Մարդիկ կ'ապրին ոչ միայն իրենց այլ և նմանեաց ու յաջորդներու համար, որով հարկ է փոխանցել անոնց՝ մտքի յղացումն: Եւ ու գաղափարները, խօսքի միջոցաւ: Գաղափարն արտայայտող խօսքերը՝ հասկանալի լինելու համար, հարկաւոր է զանոնք զաստուրել որոշ կերպով. ահա առաջին գործը հանձնարը՝ որ մտածեց դասաւորել խօսքերը. դա արդէն արտահատի ստեղծումն է. իսկ ուրիշներու և յետնորդներու հաղորդելու համար հնարեց զգալի նշաններով գործմել զայնս. այս նախնական փորձերն առաջնորդեցին զրեւու գիտին, որ անհրաժեշտ հետեանք եղաւ խօսքի արտայայտութեան: Ասկայն ժամանակի հուովման հետ լամէն ինչ փոփոխում է և մոռացուում դրա առաջին աննելու համար մտածեցին խօսքի և զրի անհաստատութիւնն, մանաւանդ ասինքն՝ անսահման ազատութիւնն չափաւորել, սահմանաւորել, կարգի և կապի տակ դնել, և այնուհետև կազմուեցաւ լեզուի փերականութիւնը, որ է արտեստ ուղիղ խօսելու և ուղիղ գրելու: Սա արդարեւ մարդկային գիտելու հրաշալիքն է, զլուս զործոցն, սկիզբն, պատճառ և մայր մաննայի՝ գիտութեանց, արուեստից և մարդկային երջանկութեան:

Այս արուեստին պարապող արուեստաւորներն, հին ժամանակներէ ի վեր կոչուէին ֆերականք. և հարկ է խոստովանիլ, հնոց քով մեծ յարգ կը վայելէին ֆերականք, որ մեծ ջանքով և ազգասէր նախնաձով վառուած՝ մշակեցին, ազնուացուցին լեզուն և բարգաւաճ մատենագրութեամբ ճոխացուցին հայրենի գրականութիւնը:

Ամէն ազգերու մէջ գերազանց գոնուեցան Յոյներն, որոց համար մեր Պատմա-

հայրն ի սկիզբն իւր պատմութեան զրում է. «Այլ և զմեծամեծս և զգարմանալոյ արժանաւորս յարուեստից (գիտութեանց և դպրութեանց) ուրից ուրից գտեալ աշխատութեամբ՝ հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու... նուիրեցին ի փառս Հիւլենացոց աշխարհին... վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ սսեւ իմաստից, ճերթողականին և իմաստասիրականին՝:

Արդարեւ գեղեցիկ խօսելու և գրելու հայրենիքն եղաւ Նլլադայի Աթէնք քաղաքը: Այս գեղեցիկ զպրութեան արուեստը, թէ և նախապէս բնութեան ծնունդ՝ սակայն միւս արուեստների նման չուենցաւ իւր մանկութիւնն և զարգացումն, որովհետեւ արուեստաւորի հանճարիցը կախուած էր անոր կերպարանաւորումն: Իբրեւ մտքի ծնունդ, բանին հետ՝ արուեստն ալ նոյն բարձրութենէն սկսաւ հոսիլ դէպ ի չափաւոր մտքերը, հրահանգելու գեղեցիկ խօսելու և գեղեցիկ գրելու: Ուզեմ ասել որ նախկին քերականներն՝ որոնք չափ, սահման, կանոն սուին լեզուին և գրութեան, չեղան գիւղական ուսուցիչներ, կամ հագիւ լիւկէններու դռներ թաթափողներ, մտքով հետիոտն մարզիչներ. այլ ընդ հակառակն՝ նախկին քերականներն մեզ կը հանդիսանան արծուոյ պէս բարձրաթիւիչ հանճարներ, որոնք իրենց անունով և երկերով, երկրիս հիմունքների պէս կանգնեցին անշարժ և անգերազանցելի, մարդկային մտքի ստեղծագործած տաճարը, վերամբարձ բռնելով մտքի հասողութեան զբմբէթը:

Իրր հայր քերականութեան արուեստին կը յիշուի Պղատոն, որովհետեւ գեղեցիկ զպրութիւն ուսուցանելու հարկաւորութիւն ինքն զգացեր է, որի յիշատակութիւնն կը տեսնուի անոր զրուածոց մէջ՝ անով որ ինքն առաջին ճննադատական ոճն մտուցեր է, հետազօտելու և ստուգելու բառերու սկիզբն, կազմութիւնն, ստուգա-

բանութիւնն: Տարակոյս չկայ որ աշակերտներն բազումս օգտուած են իրենց վարդապետի դասերով, որոց միջէն փայլեցաւ Արիստոտէլ:

Արիստոտէլ գերազանց իմաստասէր, եղաւ նաև քերթողահայր կամ քերականութեան հիմնադիրը, նա է որ սահմանեց շարադրութեան էական ութ մասունք բանի կոչուածն և այդոր տուած որոշ վրձին՝ կանոն եղաւ անկից վերջը եկողներուն, որոնք ոչ նուազ հանճարով յղկեցին լեզուին շարադրութիւնը և ճշգրեցին հրնչումներն և խօսքի մասունքները:

Քերական վարդապետներու մէջ մանաւանդ նշանաւոր հանդիսացաւ Դիոնեսիոս Թրակացին, Աղեքսանդրեան ճննական զբարոցէն, որ, թող ճննադատութեան հրահանգները, յատկապէս զբաժ է այրութեան, այսինքն ՏԱՌԻՐԻ մասին: Նա խնամքով և ճշգրութեամբ բաժնեց գիրերը ձայնաւորների և բաղաձայների, և բաղաձայններ՝ կիսաձայների և անձայների. որոնք նուազ հնչումն ունին քան բաղաձայններն. դարձեալ անձայններն ըստ հագագի հնչումին՝ զանազանում է նուրբը, միջակը և թաւը, որոց վրայ յաւելում երկրարաւորներ, կրկնակներն և նայերն. յետոյ ճառուի և կրկնելի, ամանակի, երկար և կարճի վերայ: Աս բաւական անզաւաւ նուում է Արիստոտէլից՝ աւելի կարգաւոր և պայծառ դնելով մասունք բանին:

Յոյներն սովորեցուցին Քերականութեան արուեստն նաև Հոտմայեցոց. հելլեն վարժապետներու մէջ փայլեցաւ արտաքոյ կարգի Տիրան հայկազն, աշակերտ Դիոնեսիոսի Թրակացոյն: Լուկուլլոս հաճեալ անոր՝ տարաւ Հռոմ, ուր պայմանապաւ անունը և մեծացաւ: Նա է որ առաջին անգամ զբաղարան բացաւ և գրալսմանութեամբ զբաղեցաւ: Սուրբաս պատմագիրը ասում է որ նա երեսուն հազար, ուրիշներ ասում են՝ երեք հազար մատեան հաւաքած էր: Տիրան անգնահատելի ծառայութիւն մատուցած է կիկերոնի, որ զՏիրան հրաւիրեց կարգի դնելու իւր ցրուած և խառնակուած մատեաններն, և

1. Խոր Ա. զ. Բ. էջ 12-18. Վսեռիկ. 1881.

շատ գովելի կերպով կատարեց: Բայց Տիրանի քաջութիւնը մատնաներ կարգաւորելու մէջը չէր միայն, այլ և քաջ գրագէտ էր, մանաւանդ քաջ արտասանող իրրեւ գերական. և իրկերոյն այնքան յարգում էր զՏիրան հայկազն, որ իւր տան մէջ քերականութեան վարժապետն բացաւ, ուր յաճախէին Հոռմայեցւոց տղաք մարգուելու գեղեցիկ դպրութեան մէջ¹:

Ջարմանալի բան է որ լեզուի քերականութեան պարապողներն եղան Յունաց մէջ իրենց ոսկեղարու հանճարներն, Պղատոն, Սերիստոտէլ և ուրիշներ: Քերականութիւնն իւր պարտադրիչ կանոններով այն ատեն դպրոցներու ուսուցչական աթոռի վրայ կը բազմի, երբ լեզուն արդէն և քերականութիւնն ի ծայր կատարելութեան հասած են, և Պղատոն ոչ միայն մեծ՝ իմաստասիրութեամբ, այլ և Հայր գրականութեան հանդիսանում է. իրմէ ետեւ եկողներն հազիւ մօտեցան, բայց ոչ ոք գերազանցեց զինքն ոճի վանութեան և լեզուի գեղեցկութեան մէջ: Եւ սակայն մի մարդ, թէ՛նուզ Պղատոն լինի, չէ կարող շինել, ստեղծել մի լեզու՝ որ լինի օրինակ և ընդունելի հանրութեան, եթէ այդ հանրութիւնն չգտնուի նոյն մակարդակի վերայ, և ատակ՝ ընտրելու լաւագոյնը լաւերի միջից: Եւ Պղատոն և նմաններ լաւագոյնը կերտեցին ժողովուրդի հասունացած բարբառի միջից, և շուրջ փակեցին կանոններով, քերականութեամբ, որպէս զի լեզուն վերելքից յետոյ, չսկսի նոյն ճանապարհով վայրէջլը:

Դարեր յաջորդում են իրարու և ժողովուրդներ փոխում իրենց կենցաղով, բարքերով, քաղաքականութեամբ և լեզուով. այդ յարատեւ փոփոխութեանց և այլափոխութեանց դէմ աղամանդեայ պատուար կանգնում է սահմանադիր քերականութիւնը, յորում կատարելագոյն կանոններն ամփոփուած են այն անհասանելի լեզուին, որով նախնիք արտայայտեւ են

իրանց զաղտնի խորհուրդներն, իրանց ոսկի սրտերը, Նուիրական մեհեան մ'է, սրբազան տաճար մը՝ յոր պէտք է մտնել ամինայն երկիւղածութեամբ, և խոնարհել ճակատը այն վսեմ բարձրութեան առջև, լեզուն է մայր և դայեակ ամինայն մարդկեղէն արուեստից և ճարտարութեանց. լեզուն եթէ խանգարես, իմաստութեան ծայրը կը շիջանի բերանի մէջ, ինչպէս եթէ լեզուակը հանես կը լռէ քաղցրահնչիւն զանգակը: Ուստի լաւ ուշ դրուի որ լեզուի մաքրութիւնն և գեղեցկութիւնն հանճարին զուգընթաց բարձրանում է. միջակ մտքեր զգուշաւոր հետեւողութեամբ պահելով հինը, քաղաքակիրթ ասուելու արժանի կը լինին. դէմ գնացողներն՝ ազէտ և կործանարար տխուր մակդիրները պիտի ժառանգեն:

ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐ

Մեր խորհրդածութիւններն զմեզ Յունաց աշխարհէն կը տեղափոխեն մեր քնազաւառ Հայաստանը, այն դարաշրջանին երբ թագաւորական և քահանայական գաւազաններն հովուում էին երկրի ժողովուրդը 300-428 թ., յորում զմ սկսի գրականութեան արշալոյսն՝ որ պիտի բերէ մեր ոսկեղարու լուսալիւր արեւը Հայաստանի կապոյտ երկնքի գմբեթի վերայ:

Մեր ոսկեղարն յունականին նման արդիւնք է երկու հանճարներու՝ որոնք կը ներկայանան գրական երկու հսկաներ, և հիմնում են մեր ոսկեղարու գրականութիւնը, որին նոյնպէս հետագայ դարեր հասնիլ հազիւ հազ կարենան, այլ գերազանցել ոչ քնաւ: Սահակ և Մեսրոպ երկու լուսատու ջահեր սրբութեամբ և գիտութեամբ, գուցէ գերազանց քան զՊղատոն և զՍերիստոտէլ, վասն զի ասոնց պէս պատրաստած հոգ չգտան իրանց աշխատութեանը, այլ ստիպուած եղան կոյրը երկրորդ բերել, քանդել, հասլել, նոր այբուբեն ստեղծել և կազմել լեզուին հեգեմարանութիւնն: Շատ զժուարիւն գործ, որի համար հարկաւոր էր

1. Հետեւողութեամբ Ռուբէն Հնախոսութեան հո. Զ. վեհերի 1829:

տրամաբանող միտք, կիրթ ճաշակ, գեղարուեստի գիտութեան զաղտնիքին ծանօթութիւն, և գեղագրական մշակոյթ։ Ահա այդ պատրաստութեամբ և ջերթոգական արուեստին հմտութեամբ առցուն, երկու ամուլներ Սահակ և Մեսրոբ, գութանը կ'ուղղեն գործի երկարութեամբ և կը շրջեն հողը ապագայ դարերու սերմերն ընդունելու։

Ոսկեդարու հիմնողները, ոսկի լեզուին հանճարողները, կերտողները չեղան լորդովուրդի խօսած լեզուն արուեստով չի դարբնուիր, այլ բնութեան գործ է, և բնութեան օրէնքներին կ'ենթարկուի։ Լեզուն ժողովուրդի բերանի մէջ կ'անի կը զարգանայ և հասունութեան կը հասնի, ինչպէս բոյսեր հողի մէջ։ Նրա միջից դուրս կու գայ ցորենը և լիբանանու դաբաւոր մայրիներն։ սակայն այս տարբերութեամբ որ բանականութեան ենթարկուած գործողութիւնը կը համեմատին ճարտարութեան և ճարտարարուեստին։ Ճարտարութիւնն բնածին է, անոր գործաղորդութիւնն արուեստ։ Նախ զաղափարն և ապա զաղափարեալն։ Լեզուն ուրեմն փորձառութեան վրայ հիմնուած, յառաջագոյն ճարտարապետուած, նրան յաջորդել և արուեստը, որ է կանոնների գիտան, իւր սահմանի մէջ պահելու լեզուն։ Այդ կանոններն առնուած են մեծ հանճարների ստեղծագործութեանց վրայէն, յորում մար-

դիկ նկատած են լեզուի համաշխարհային, ներդաշնակութիւն, գեղեցկութիւն։ այսինքն արդէն կատարելութեան հասած, և պէտք է պահել այն կէտին, այն բարձրութեան վերայ։

Բնաւ զարմանալու բան չկայ թէ ինչպէս առանց զրի Հայ լեզուն աշղպէս կատարելագործուած էր։ Բնութեան օրէնքով, ժողովուրդ մը կ'անի կը զարգանայ, ինչպէս ծաղիկներն և ծառերը, որոնք զատ կանուխ են՝ քան նկարչութիւնը, պատկերահանութիւնը։ Սահակ և Մեսրոբ և թարգմանչաց խումբն մեր լեզուի բացառիկ և տաղանդաւոր նկարիչներն եղան։ Ինչպէս մարդ յափշտակուում է Ռաֆայէլի, Տիցիանոսի, Լէոնարդոյ Դա Վինչիի, Ֆրա Բէատոյ Անճէլիկոյի նկարների առջև, այնպէս մարդ հիանում է Աստուածաշնչի, Ոսկեբերանի թարգմանութեանց, Եզնկայ և Ազախանգեղայս գրուածոց առջև։

Այս զաղտնիքը լաւ հասկանալու համար հարկ է մտաբերել նախնիթացարար թէ Հայ ժողովուրդն առաւելապէս պահել է արիական ցեղի ազնիւ աւանդութիւններն։ Բակտրիական քաղաքակրթութեան ազդեցութիւնը մեծ եղած է Հայաստանի ժողովուրդի վերայ, որի ակնյայտնի և շօշափելի փաստներ և ապացոյցներ գտնում ենք առաւելապէս Խորենացւոյ պատմութեան մէջ*, ուր ամբողջական կտորներ է՝ որ արձակ, է՝ որ ոտանաւոր ամփոփուած

* Հոս մէլ բերենք այդ զրոյցներէն ու վէպերէն ինչ ինչ մասեր, լեզուին վրայ զաղափար առնելու համար։

1. Ահեղ և երեկոյից առաջինքն ի գիշեր, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և թագմատարութեան։ Եւ ի սոցանէ նաեւալ զատու աղզ սկայիցն, անհեղեղք, յաղթանալով մարմնով և վիթ, խաբիք, որք յղաքեալ մարդաստանութեամբ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակալինութեան, և ի նոյն լինելն ի գործ անկեալք։ յոր հոյս սոցան իմն և աստուածային ընդեցեալ ի գիշեր ցտամանէ, ցրէ զամբարտախն, և մարդկանն անլուր բարձրաս իւրացանչիւք ուժից բաշխեալ, ազմուկ չփոթի ի մէլ արկանէին։ Բոցոր մի էր և յապետութեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովանիլ և հաստաղեղն։ Էլ 47։

2. Այս, ասէ, Հայկի՝ զեղապաշտաւ և անձնեայ, քաղաքապետ, խաչատուր և հաստաղազուկ։ սա ի մէլ

սկայիցն քաջ և երեկոյի լալ, ընդգիտալաց ամենեցուն, որք ամբարտալին զձեռն՝ միտպետի ի վերայ ամենայն սկայիցն և զիւցաղանք։ Աս խորխաղացեալ ամբարձ զձեռն ընդգիտ՝ բնաւորութեանն Բիւլայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէլ բաղմակցոյ սկայիցն, անուն իւրաց և ուժաւորաց։ Վանդի անդ մոլեղեցեալ այր իւրաքանչիւր սուր ի կող ընկելի իւրոյ ձեռնով, նաեւայն տիրել ի վերայ միմեանց։ ուր պատահանց ի դէպ եղանէին Բիւլայ՝ բռնանալ ունել զամենայն երկրի։ Էլ 48։

3. Բնակեցեք, ասէ, ի մէլ ցրտութեան սառնամանեաց, այլ չհուսեցեալ մեղկեալ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուրդ, և նազանդեալ ինձ՝ կեաց ի հանգարտութեան, ուր հաւոյ է քիչ յերկրիս խումբ ընկալութեան։ Էլ 51։

4. Իսկ Բէլն, յանգուգն և անհոռի զօրութեամբ ամ-

են, առնուած ժողովուրդի բերանից տա-
կաւին է. դարու վերջերին, նաև ի հաշուի
առած Ս. Գրիգորի մասին ասուած զրոյցն՝
թէ ջնջեց հեթանոսական բրգեր և երգեր.
ասոնք ոչ այլ ինչ էին՝ բայց եթէ Ռրիա-
կան կամ Վետական երգերի թարգմանու-
թիւններն կամ անոնց հետեւողութեամբ
Հայ երգիչներէ յօրինուած երգեր, վէպեր,
հագնեալութիւնք՝ մարտական, կենցաղա-
կան և հովուական: Հրաշալի գանձեր հայ
հեթանոսական մատենագրութեան կոր-
սուած են, որոց ներկայութիւնն բնաւ
պիտի չգարմացնէր զմեզ է. դարու ոսկե-
ղինիկ լեզուի համար: Որքան երախտա-
պարտ պէտք է լինել ֆերթողահայր Խո-
րենացւոյն որ մի քանի պատառիկներ
հրահեր Թիւր պատմութեան մէջ, այն ալ

ոչ եթէ ճշգրիտ պատմութիւն գրելու դի-
տաւորութեամբ, այլ աւելի մի տեսակ
մեկնադրարիւններ մեր նախահայր զիցա-
զուններին, որոնք հանդիսանում են Հայաս-
տանի բնակիչներ և տիրապետողներ: Այս-
պէս ասում է ինքն իսկ. «Եւ այդ կարգ
գրադարանութեան զաղարուծն առցէ. զի
հանդէս է մեր, ոչ զպատմութեանն ող-
ջարանութիւն գրել, այլ չտեսլ ցոյցունել
զատայինս մեր և զքուն ինի նախնիս: Եւ
այդ ջանքն եղած է ոգտուիլ ժողովրդա-
կան զրոյցներէ և վէպերէ, որու վկայէ
նաև իրզանդ, պախարակելով Հայոց հե-
թանոս ասանդութեանց, երգերու և պա-
րերու յարուած մնացած լինելն, որով
հետո մնային ի ճիստոնէութենէ:

Այն պատառիկներն զորս Խորենացի

բոխին՝ որպէս յորձան ինչ աստիկ ընդ զառ ի վայր
կեղեակ, փութայր հասանել ի սամանս քնակութեան
Հայկին, ի սիրտ ի մարմն վատարեալ արանց
զօրաւորաց: Աստ ուշիմ է խոհմ սկզբն, քաջագան-
գուն է խայտակն, ահապարեալ հաւաքէ զորդիս իւր
և զժողովոս, արս քաջ է աղեկանաւորս, թուով յոյժ
նուազունս, և լալլա ևս որ ընդ իւրով նկատու. հասա-
նէ յեղբ ծովակի միւր, որոյ աղի են խոլքն, մանունս
ունելով ձկունս յինքեան... Եւ. էջ 52-56 մինչև փշէ
զօղին: — Նկատելի կէտ մը. այդ ծովակը դեռ իջնու-
նաց անունով կոչուած է:

Ե. իսկ Արմենակայ առեալ զամենայն քաղութիւնն,
խաղալ յարեհրս կրտսոյ, և երթեալ ինքն ի խո-
րին զաշտովայր մի ի քարեալազալմանց պարսպիւ
լիրանց, զետոց կարեւաւասակց յարեմոսից ընդ մէջ
անցանելով, և զգլշան արեւելից ինի զողջես իբր որ-
սայսեալ, ձիւ յարեգակն կոյս զերկայնութիւն պար-
զեալ, և առ ստորտուովք լեւանց քաղում ակնակիտ
բղինալ աղբեւոյ, որք ի զետոց հաւաքումն եկեալ նե-
զարար առ սամանեց նոցա, մնալ լեւաճք և եղբոց
դաշտին: Այլ հարապալին արեւելիսն լեւան՝ ալիտա-
կալիտս ունելով զաղբին, ուղղորդ ի յերկրէ քուտեալ,
հրեքորէի, որպէս ասաց ընի ի մերոց, քաջազօտույ
ստն իրցապետակ ճառապարտաւ, և առ փոք փոք ի
չէշտուն անկեալ, Ժեր ռե արգարե լեւան ի մէջ հրի-
տաարզացեալ լեւանց. էջ 59:

Ե. Աս այր աշխատաւոր և նայրենաւոր եղեալ, որ-
պէս իրցանէ նոյն պատմաբան, լաւ ամարել զմիտա-
նելն ի վերայ նայրենեանց, քան թէ անասնի զորդիս
օտարածնաց կոխելով զամանս նայրենիս, և հարազա-
տից արեան նորա տիրել արանց օտարածնաց. էջ 66:

7. ԺՁ. Գլուխն ամբողջ քաղուածոյ է. էջ 78:

8. Արայնան Արայ միտանի ընդ Շամիրամայ ի
պատերազմի, թողով արու զաւակ ամենահարուստ և
չատանանէր յիւր և ի քան՝ զԱրուստան, որ Աս
տեղանիւք. քանի ձեռեալ էր ըստ պաշտամանց ի օս-
սին Արամանիկայ, որ յԱրմաւիր. զորոց զաղար-
թուցն սօսուել, ըստ կանգարու և կամ սաստիկ շնչե-
լի օդոյն հեղի ռաւոց յարմումն, սովորեցան ի նմայ
աշխարհիս նայկազանց. և այս քաղում ժամանակա-
ւէջ 97:

9. Փոռեղի ստ ամենեցունց թաղաւորացն միւրոց հա-
րաւատալոյն և խոհեմազոյն, և արանցն աշտոյիկ և ա-
մենեցուն քալ. որ և կիրտուի տակցեալ, զԱրայն ի
քաց քանալով զիշխանութիւնն, և զԵրոյն ոչ սակաւ
ժամանակս ընդ իւրի նուանալ հաղանդէր. և զսա-
ման միւր ընակութեանս ընդարձակեալ ի նիւն մեր
հասուցանէ յեղբս Ժայրից բնակութեանց. և ամենե-
ցունց՝ որ առ իւրովքն էին ժամանակեղ՝ նախանձելի,
և յետնոցս ըզլալի ինքն և ժամանակ իւր:

Ձի մ ոց ի ճշմարիտ արանց, և որոց ի քարս ա-
րութեան և խոհեմութեան սիրելութեան կացցէ, սա-
լա յիշատակոյն ոչ զուարեանքի, և յորդորիքն այս-
պէսի այր լինել: Արանց կացեալ զտոխ, և արութիւն
ցուցեալ, զազա մեր քարեարցոյց, և զըզ լծով կա-
ցիստս՝ լեւադիր և հարկապահանջս կայոց քաղմաց.
միջիւս ոսկւոյ և արմաթոյ և յարանց պատուականաց
և զգնասուց և պէսպէս զունոց և անգուածոց՝ արանց
հատարակած և կանանց միանգամայն քաղմացոյց. որով
աղեղազոյնք իւրէ զգեղաւորս երեւէին պոռնիկից, և
զեղաւորքն ըստ ժամանակին ստնասարակ զիւրանա-
ցեալք: Հեռահարամարտքն ի վերայ ուսոց բերեալք, և
պարսաւորքն առնաւորակ զիւրազեղունք, և շերտաւորքն
ի տուրք և ի տեղ նիզակի վառեալք. մերկէն վառա-
նօք և զգնաւորք երկաթոյ պարածածկեալք: Որոյ ի

ազուրիք է իւր պատմութեան մէջ, իսկոյն կը տարբերին ոճով, հայկաբանութեամբ, բանաստեղծական աւելումով՝ մնացած շարագրութիւնէն որ թէ և հակիրճ, ջղուտ և երազներթաց, սակայն անհարթ է և սակաւ ներդաշնակ: Այն պատառիկներն կը հաստատեն թէ Գրիստոսէ շատ դարեր առաջ Հայ լեզուն կազմուած էր, և կը շնչէն բարձրագոյն բանաստեղծական ոգի մը՝ որ կարծես թէ կը բխեն Ռիկ-վետայի տողերից, յորոց քաղ հանուած կարծուի վահագնի, անշէջ հրոյ կամ արեգական երգը. մշակուած լեզու մ'է յատուկ աշուղական թափով գրուած*:

Այս բոլորը, որոնցից Գրեթողահայրն Ե. դարու վերջի կիսուն, է՝ որ քաղած է և է որ իւր իսկ ականջով լսած է, բաւական իսկ կը հաստատեն որ զրոց գիտէն յառաջ Հայ լեզուն զարգացած՝ գրական լեզու էր մողովորդի բերանի մէջ:

Պէտք է դիտել որ այս վերոյիշեալ պատառիկներն յօրինուած են նախ քան Մակեդոնեան տիրապետութիւնը:

մի վայր հասերոց՝ բաւական էր տեսիլն միայն և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլունք և շողանք, զքննախան արտաշախանք, իրազողութեան և յինութեան բերող, իւզով և մեղու զնասակ սամնեցուն պարբալ:

Ձայս, և որ այլ աշուղներ քաղուածք, երբ մերոյ աշխարհի խորտակաւ այս և աղէքիկ մայրիկ ներսը՝ երանանքեան Տիգրան, երեսոց զունեան և մեղուակն, անմեայն և թիկնաւան, առաջարբան և զեղեցիկուն, պարկշտն ի կերակուրս և յմեղեկս և ի խախնաւ, նութիւնս օրինաւոր. զօրմէ ասէին ի կնիւն մեր, ոյրք բամբուռն երգէին, լինել մամ և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր. մեծխմանս և պերճաբան, և յա՛մեղանս որ ինչ մարգարութեան պիտանի: Եւ զինչ ինչ ի զիւր յայտ արգէլք իցէ բան սիրելի, զան թէ որ յազազա արտա էին զովառք և պատմութիւնք յերկաւեր: Արդարադատ և հասարակաբէ կշիռս ունելով յա՛մեղանի, զաննայն ուրոք կնեցալ՝ մտացն լեակաւ կշռէր: ոչ ընդ լաւագոյնս խանգալը, և ոչ զնաստան արամարներ, այլ ամենեցուն հասարակաց ճարտը զիւր-մեղանք իւրոց ի վերայ տարածել զգիտութ. էլ 107:

10. Ի՞՞՞. զի. և յալորգի:

11. Բայց զովմի զքայնասանին զիմ և զերկակաւորն և զամենեւին բոլոր անշատովք համեմատն և ի զեղեցիկութիւն աւարտեալ հասակի. քանզի առաջ ա-

ՓԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հայր հեթանոսութեան շրջանին սերտ կերպով չմերձեցան և չհամակերպեցան ոչ Յունաց, և ոչ Հռոմայ հետ, որովհետեւ կրօնապէս միշտ բաժան մնացին: Արեւմտեան բազմաստուածութիւնն չկարողացաւ աթոռ շահիլ Ազատ Մասիսի բարձունքի վերայ: Մինչդեռ Քրիստոնէական շրջանը այլ ասպարէզ բացաւ Հայ երկտասարդութեան առջև. կրօնքի խտրը բարձուած էր մէջտեղից, Հայ և Յոյն և Հռոմայեցի նոյն կրօնքն ունէին և նոյն վարդապետութեան հետեւին. անոնց միութիւնն հաւատալիաց մէջ՝ կ'առաջնորդէր մոլեքերը քաղաքական եղբայրութեան և հաւասարութեան:

Ուստի Տրդատ և Կոստանդիանոս, Գրիգոր և Սեդրեւորոս, զոյգ ամուսնիւ, առաջնորդ, լուսաւորիչ և միաւորիչ եղան երկու ազգութեանց: Որով աւելի անխտիր, աւել-

մեկանիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոց իւր ունելով զոյգ: Եւ զի՝ երկայնեմ զբանս. քանզի ի լինել պատերազմին, նիզակաւ որպէս զլուր ներձեալ զերկաթի ածուր հանգերէն, շամբիւր զԱլեքանակ յընդարձակ առջ նիզակին, և յամփոփել միասնաբար զանոն՝ արուաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զինան ի դուրս քերէ: Բայց մարտն էր պոսչելիք. զի քաջք զիպեալ քաջաց, ոչ վազվազակի թիկունս ի միմեանց զարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարէր զօրծ պատնէր բազմին ժամս ձիւս: Իսկ վախճան գործոյն աններ ման Սլշառակայ: և այսպիսի զիպուածն ի քարե-բախտութիւն յաւելեալ, յանախէր փառս Տիգրանայ. էլ 122:

Այս ամենը քաղած է Թոմասեց երեքեմ «զոր պանցին արտօբելով, առում է, որպէս լսեմ, մարգրիկ կողմանն զինաւան զաւառին Փողթան» էլ 125:

* Երկեք երկին և երկիր, երկեր և ծիրանի լծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեղնիկն. ընդ եղեղան փող ծուխ ելանէր, ընդ եղեղան փող բոց ելանէր. և ի բոցոցն պատանկիկ վազէր, նա հուր հեր ունէր. (ապա թէ) բոց ունէր մուրուս, և աշխուճն էին արեւ զակունք. էլ 127:

«Ձայս երգելով ոմանք բամբուռն, լուսք իսկ աւանշը մերովք» կ'ըսէ Պատմաւալը:

լի համարձակութեամբ և աւելի բազմու-
թեամբ Հայ ուսումնասէր մանկտին, ծա-
րաւի գիտութեան և իմաստից, կը վա-
զէր ի Քիւզանդիոն, յԱղեքսանդրիա և
յԱլեքսիք:

Հայաստանի ուսումնասէր երիտասա-
րդութիւնը երբ իւրացնում էր յունական
դպրոցներին ուսումն, այլ ևս շատերը չէին
ուզում դառնալ հայրենիք: Տիրանի նմա-
նին հանդիպում ենք Դ. դարում յան-
ձին Պրոյերեսիոսի կամ Պարոյր Հայ-
կազնի՝ փառաբանուած նոյն ինքն Գրիգոր
Նազդիանզացիէն իբրև մեծագոյն ճարտա-
նեայն և մեծագոյն ճարտասան - հոեետորն
իւր ժամանակին, որ եղած էր ուսուցիչ
իւրեւ և Ս. Բարդղիւն, յորմէ կը պատ-
կառէր Յփալիանոս Ուրացորդ. իսկ Ուն-
րիոս կայսրը զնա դաստիարակ ընտրեց
իւր արքայորդուց և կոչեց Հոռմ, ուր Սե-
նատի խնդրանքը Հոռմի գովեստի ճառը
խօսեցաւ, որոյ համար արժանի դատուե-
ցաւ պղնձէ արծառի, պատուանդանի վրայ
մինչև ցայն վայր չլուած արծառագրու-
թեամբ. «Թագուհին տիեզերաց, Թագա-
ւորի բանին»:

Նոյն դպրոցին կը պատկանին աներկ-
բայապէս Սահակ և Մեսրոբ. անոնց սահ-
մանուած էր կերպարանափոխել Հայաս-
տանի միտքը, մշակոյթը կաղապարել, կո-
թողել ազգ մը՝ որ, ինչպէս փորձն ցոյց
տուաւ, պիտի դիմանար բարբարոս ձեռ-
քի և ժամանակի հարուածներուն:

Ս. Սահակ և Ս. Մեսրոբ չկազմեցին Հայ
լեզուն, և ոչ ինքնահնար կանոններ ստեղ-
ծեցին, արուեստական լեզու մը տալով
ազգին, ինչպէս շատեր կաղծեցին և դեռ
կարող են կարծել: Այլ նոցա Ե. դարուն
պատրաստի ունէին կատարելապէս զար-
գացած լեզու մը ժողովուրդի բերանը:
Երեք և զուցէ աւելի հազար տարիներու
քաղաքակրթութիւն կը վայելէր այդ դա-
րու Հայաստանի բնակիչը. հոգ չէ թէ նա
արդեօք արիական ծագումն ունենայ, թէ
սումմերեան, կամ թէ փոթգական. այս
յայտին է, որ հնազոյն քաղաքակրթու-
թեան ամէն նշաններն ունի զոր այսօր

համեմատական լեզուագիտութեամբ և քրն-
նական պատմութեամբ իսկ գիտնական-
ներն ի յայտ կը բերեն. որոյ մեծագոյն
ապացոյցն է մեր ոսկեղաբու սքանչելի լե-
զուն: Եւ որքան դեռ զանձեր ծածկուած
կան մեր լեզուի բառերի մէջ, որք. եթէ
իմաստասիրական մտքով ճշնուին շատ
թանկագին նիւթ պիտի մատակարարեն
մեր ազգի անցեալ պատմութեան, մա-
նաւանդ նախապատմական ժամանակնե-
րու մասին:

Ապա մէջէ կազմուած էր լեզուն, կա-
րող է ձկն հարցանել. ի՞նչ բանի մէջ
կը կայանայ Սահակի և Մեսրոբի ա-
րդիւնքը: Մենք մեր տկար տեսութեամբ
կ'ասենք, բաց ի կրօնական և քաղաքա-
կան շոշափելի օգուտներէն, կը նկատենք
անոնց մեծագոյն արդիւնք, տառերի փետէն
վերջ, լեզուի ցերեկանական կամ ցերթո-
ղական արուեստի մշակումն, և որոշ կա-
նոնների հպատակեցնելն, անխախտ պահե-
լով ժողովուրդի արտասանութեան առողա-
նութեան հոգին և ճշգրտութիւնն: Սահակ և
Մեսրոբ երկար տարիներ այդ բանի մա-
սին խորհրել և խօսել են, և զուցէ Աթէն-
քի կամ ուրիշ իմաստասիրական դպրոցի
մէջ, երբ նոցա սովորում էին յոյն Գե-
րականների և վերժանում էին հին ցե-
թոզների կազմած կանոններն յունական
ծայր աստիճանի մշակուած լեզուին. և
մանաւանդ Աղեքսանդրեան դպրոցի ա-
մենափայլուն դէմքի Դիոնեսիոս Թրա-
կացոյ ցերեկանութիւնն, որ կատարելա-
գոյնն էր, և մինչև ցարդ նոյնը կը մնայ,
աննշան յաւելումներով: Հինգերորդ դա-
րու զրոց գիւտի պատմութեան մէջ, դի-
տելի կէտեր կան որոնք արդէն գուշակել
կու տան թէ Ս. Սահակի զլիաւոր պա-
րագումները կամ պրոֆէսիոնն եղած է Գե-
րականական ուսումն. յորում յառաջագէմ
գտնուած է քան զքաղում հասակակիցս
իւր և քան զյոյն գիտունս:

Արդարեւ, թէպէտ Ս. Մեսրոբի պատ-
կանում է զրոց գիւտի արդիւնքն, անոնց
թիւն, դասաւորումն և պատշաճեցումն մեր
լեզուի ամէն հնչիւններուն, սակայն հե-

գինայից կազմութիւնն և գրեթե արտասանութեան դասաւորութիւնն ըստ աստիճանի թանձրութեան կամ նրբութեան, և Հայաստանի ամէն բարբառների միջից լատագունի ընտրութիւնն՝ շարադրութեան հաստատուն կանոններ զնելը, կը պատկանին առաւելապէս և վճռականօրէն Ս. Սահակի հանճարին:

Երկու լուսաւոր ամունքներու աշխատութիւնը տեւած է մի քանի տարիներ. բաց ի տեսականէն նոքա փորձառական վարժութեան ենթարկել են իրենք զիրենք և իւրեանց աշակերտներն. «որք լին սակաւ մի և նոքա, որպէս երանելին Մաշտոց, մերձաւորեալք ի յունարէն հեզնայան», Նոքա Հայկական ի. Հանրապետութեան յարուցած խոշորդոտներու հանդիպած են, և երկար խորհրդակցութենէ յետոյ, եկել են այն եզրակացութեան որ մեր հին լեզուի կազմախօսական և ստուգարանական ոգին լատագոյն կերպով կը բացատրուի այն կանոններով, որոնք Սահակ-Մեսրոբեան կաճառն հաստատած է ժեղ զար յառաջ: Եւ նոքա նախօրինակ ընտրած են յոյն լեզուի շարադրութիւնն և քերականական սահմանադրութիւններն, որոնք սերտ կապ ունին իմաստասիրական մակացութեան հետ. որովհետեւ տարակոյս չկայ որ յունական զարդոցների մէջ մի առանձին զլուս կազմած լինին և ԲԱՌԵՐԻ ԻՍՏԱՍՏԱՍԻՌՈՒԹԻՒՆՆԵՐ՝ քերականութիւն յորինելու համար: Հոծտրութեան կանոններու մէջ մտնում էր, բառերի առողանութեան, ձայների զանազանութեան, հեզելու կերպի, ձայների զանազան ելեէջների են. ուսուցումն տրամաբանօրէն՝ ոչ մեքենաբար, ինչպէս ուսուցում են գիւղական դպրոցներում: Արդ այս կերպ կարգաւոր (système) ուսուցումն լեզուի, մի ճիւղն էր իմաստասիրական ուսման. հետեւապէս մէկն որ ֆերական էր և ֆերթող, հոմանիշ էր ֆիլիոսֆայի, և որովհետեւ իմաստասէրք չէին կարող բանը բաժանել բառից, հարկ էր որ բառն բովանդակէր բանը և բանը բացատրուէր բառով:

Արդ միտ զնելով երեք պատմիչներու, Կորեան, Խորենացոյ և Ղազարայ խօսքերուն, որով մեզ հասուցած են նշանագիրներու գիտի պատմութիւնն, ակն յայտնի կ'երևի, որ ժամանակակիցներու դատումով, Ս. Սահակ բարձրագոյն հանճարներից է, որք պատգամատու և օրէնսդիր եղած են ժողովուրդներու, և գծեր են լուսաւոր ճանապարհ մտաւորական աշխարհի համար, յորմէ զարտուղիւն, նշանակում է ինկնալ տգիտութեան և մոլորութեան մէջ: Տղիտութիւնն համեմատուած է կուրութեան հետ. կուրութիւն աչքի, կուրութիւն մտքի. «կոյր աչօք զրկի ի ճառագայթից արեգական, իսկ կոյր մտօք՝ ի կատարեալ գիտութենէն»:

Արդ Ս. Սահակ առյցեալ էր այս կատարեալ գիտութեամբ, որով թէպէտ «Եւրանելին Մեսրոբ հանդիպեցուցանէր զհայերէն աթուրայն ըստ կարգման սիւլվրայիցն Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն իսահակայ, զաթուրայիցն զաղափար, ըստ անսայթարուեան յունին: Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ողորակի՝ առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ ՅՈՅԹ ԱՌԼՅԵԱԼ ԱՆՅՈՒԹԱՆԵՐ ՎԱՌԹԻԻՔ ԶԲԱԶՈՒՄ ԳԻՏՈՎՔ ՅՈՒՆԱՅ. ԵՂԵԱԼ ԿԱՍԱՐԵԼԱՊԷՍ ՆՍՐԱՏ ԵՐԳՈՂԱԿԱՆ ՏԱՌԻՅՆ ԵՒ ՀՈՅՏՈՐԱԿԱՆ ՅՈՐԴԱՆԱՅ ՅԱՏՏԱՐԱՆՈՒԹԵԱՆ, ԵՍՍ ԱՌԱԵԼ ՏԵԼԵԿԱՅԵԱԼ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՏԻՅՆ ՅՈՒՅՆԻՐ »:

Արդարեւ Աստուածաշունչ գրոց հրաշալի թարգմանութիւնը մեզ համար, իսկ օտարներուն՝ «Թրագուհի ամենայն թարգմանութեանց» կոչուած, կ'արդարացնէ միայնակ Ս. Սահակի տրուած գովիստը, որի համար ունեցած է բազում հմտութիւն այլ և այլ լեզուներու և հանճար և դատողական ընտրութիւն. Կորեան ասածին պէս, Հայաստանի բազմաեզ ժողովուրդան նորոգ և սքանչելի լեզու մը կազմելու, արժանի ի. դարու գիտնականներու զարմացման, Նոյն իսկ իւր ժամանակակիցներու և աշակերտներու զարմացումն կը

ստիպէ՛ զմեզ նա մտածել ջերթողահայր խորհնացու պէս, նմանցնելով զնա Պղաւտոնի. «ոչ խնդրել հրաման պատասխանւոյ ի սանդարամետապետէն Պրողէիադայ, այլ ուսանել զգորութիւնս պէսպէս իմաստից ի նոր Պղատոնէն, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ արժան զտայ աշակերտ. և ոչ անկատար վարժմամբ յանգեալ արուեստից ինքնացայ՝»։ Թէպէտ խորհնացի զինքն անարժան աշակերտ վարկանի Սահակայ, սակայն թէ որքան յառաջադիմեր էր նաև առ ոտս Հայրապետին և ապա, կատարելագործուելու համար զըրկուելով «յվղեքսանդրիա՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօղանալ ճեմարանին վերաբանութեան», յետ վերադարձին կարող եղաւ Պրելու իւր «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» ի մէջ. «Բ՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսուցն, ո՛վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս, ո՛վ զհայրականն բարբառեսցի զուրաճութիւն, ՄԱՍԱՐԲ ԻՆՁ ԲԱՂԹԱՆԻՍԻԱՆ ԾՈՐԳԻՈՅՈՒՄ»։ Անշուշտ այս առաւելութեան համար ժամանակակիցներէն կոչուեցաւ ՔիթՈՂԱՆՆԱՅՐ, որպէս հմուտ քերականական խորին մակացութեան, որով Սահակ հաւասար դատուեցաւ Պղատոնի, որ անդրանիկ հաստատողն եղաւ քերականական, կազմախօսական և ստուգաբանական օրէնքներուն։ Մանաւանդ ինչպէս վերագոյն ասացինք, Դիոնիսիոս Թրակացւոյ գիտական քերականութեանն որ կը բովանդակէր զեղեցիկ դպրութեան քննական ուսումն, կը կազմէր լրուամ իմաստասիրական հասողութեան և ամենայն մասանց բառի, ըստ ամենայնի տեղեակ երգողական տոեղիցն (ոչ երաժշտութեան խաղերուն, որպէս կարծեցին ոմանք) այլ այն նրբազգաց զանազանութեանց բանի, բառի, վանկի, տառի, աթոթաշիցն, անձնիւր զրի արժէքին ըստ ծագման, ըստ արտաբերութեան, ըստ այլ և այլ ծայրերու հնչուեցնելու, որով որոշուում են ծայնաւոր և բաղաձայն տառեր և ենթարձանուում են թաւ,

նորք ձայների կայն. այս էր Ս. Սահակի երգողական տառից գիտութիւնն, հանդերձ արտասանութեան և առգանութեան կանոններով։

ՀԻՆ ՈՒՂԱԿՐՈՒԹԻՒՆԵՐ ՀԻՄՆ ԱԶԳԱԳԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ

Արդ եղբարփակելով մեր երկար գրութիւնը, պէտք է ասենք որ «նոր կոչուած ուղղագրութեան» ոչ միայն պէտք մը չկայ, այլ նաև եկաւ խանգարելու այն ուղիղ և գիտական ուղղագրութիւնը՝ զոր տուին Սահակ, Մեսրոբ, Յովհանն, Յովսէփ, խորհնացիին և այլք երբ հայկական տառերը ստեղծեցին և ժողովուրդի լեզուն նոյն տառերով հեզել փորձեցին, և երկար փորձերէ վերջ լաւագոյնը հաստատեցին, զոր և ի. դարու Եւրոպական գիտնականներն ճոխարաւ հաստատեցին. միայն տգիտութիւնը, որ զմարդ յաւակնոտ և յանձնապատասխան կ'անէ զայն գողդելու», պիտի խաթարէ զայն աղճատած կանոններով։

Հինք ճանաչիւր էին համեմատական լեզուի ուսումն։ Ինչո՞ւ կը մոռանան նոր «ուղղագրութեան» հեղինակներն թէ Աղեքսանդրեան դպրոցն, որուն աշակերտած են թարգմաններէն ինչ ոմանք, առաջինն եղաւ լեզուաբանական ուսումն մտցնելու գիտութեան ասպարէզին մէջ, հոն համեմատական լեզուագիտութիւն և բառագիտութիւն հաստատուեցան, ճշդելու լեզուներու և բառերու ծագումն, ծննդաբանութիւնը, վասն զի նոքա ըմբռնած էին թէ լեզու և բառեր ինչ կարեորութիւն ունին պատմութեան համար, կարենալու մարդկային ցեղերու և տոհմերու ազգաբանութիւնն ստուգելու, և ցոյց տալու ներքին կայք և խնամութիւնն արդէն քաղաքականապէս կազմակերպուած ազգութիւններու։ Այն դարու քերականներն ալ անդադարձներ էին որ նախնական մայր լեզու մ'եղած է ընդհանուր ազգերին, և նա զրիթէ անհետ եղած է, պահելով միայն արմատական կազմն՝ որի վերայ գալիս են զանա-

զանցեցիք զանցեցներն՝ իրենց յատուկ հնչույթներով։ Եթէ Սահակեան . զպարոնց միայն ականջի հասած ձայնով զեկամարաուէր դասաւորելու մեր տառերը, և սահմանելու անոնց ձայնական արժէքն, այսօր մենք պիտի ունենայինք թ. Հանրապետութեան առաջարկած խժական «ուղղագրութիւնն»։ Ներկայ ժամանակից վերցնենք Գերմանիա բառը. Հռոմայեցիք գրում էին Germania, նոյնպէս այժմու իտալացիք. իսկ Գերմանացիք զայդ հնչում են Չեր կամ Զերմանիա. մարդն՝ homo և uomo իտալացին. իսկ Գերմանացին uomo. նոյնը չեն արած Արեղեանն և բնկերը պարտադրելով որ, որոշը՝ գրուի Վորոշ, յաշոշը՝ գրուի Հաշոշ. և սիրում ենք յուսալ որ կու գայ մի օր որ ինքն իսկ Ուս. Արեղեանն հաշիւով՝ դատապարտէ իւր հաշու «ուղղագրութիւնը»։

Թիք. և թ. դարու լուսաւոր գիտութեան նուաճումներէն մին եղաւ համեմատական լեզուագիտութիւնը։ Այդ ուսման ծրագրի մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէ Հայ լեզուն, իւր եզակի քառամթերքով, և կազմում է մի. առանձին ճիւղ։ Դասեթ է մեզ որ Հնդկարական կոչուած արմատական հին լեզուն կորսուած է. զայն գտնելու հետաւում են, և Արեղեանն. գիտէ թէ որքան կարևոր է հայերէնն այդ լեզուն ճշդելու. ճշդելու համար՝ արմատներն են ուսումնասիրում։ Մեր բառերը Ե. դարու թարգմանիչներն չկերտեցին, այլ մինչև անոնք՝ գրեթէ երեք հազար տարիներու հնութեան պատկառելի մշակոյթ մը կայ ժողովուրդի բերանի մէջ։ Իւ մեր թարգմանիչը գիտական դրոսեամբ և հաւատարմութեամբ զայն՝ գրի առան. զեղին։ Գրի աւանդներն աւելի դիտնա. կանօրէն և աւելի հաւատարմութեամբ նաև ձայնական (phonétique) ճշգրտութեամբ, որովհետև նոքա ապրում էին Պարսիկ, Ասորի և Յայն կենդանի ժողովուրդների հետ և լսում էին անոնց բերանից կենդանի բարբառը, և իրենք իսկ տիրապետած էին անոնց լեզուին, ուստի պահելով անխախտ ոսկեղարեան ուղղագրութիւնը

մեր լեզուին՝ մէջ, շատ հեշտ կերպով գիտնականներն պիտի կարենան պարբաւորեալ և զտնել հին արմատն և նախնական լեզուն։ Այսօր լեզուագիտութիւնը կու գայ յեղաշրջելու մարդկային պատմութիւնն, անհատական բառեր լոյս սփռուի են անցեալ գիտութեանց վերայ, ազգերու գաղթականութեանց, այնպէս որքան Հայ ազգի անցեալն՝ որ այնքան մթին և խորհրդաւոր է, կամաց կամաց պիտի լուսաւորուի և զտնէ. գիտական մեկնութիւն, պիտի պարզուին շատ մը հնագիտական հարցեր, զոր ի զուր է փնտրել պատմութեան էջերի մէջ. Վասն որոյ Հայաստանի թ. կառավարութիւնն փութանակ ժամավաճառ լինելու երախայական հանելուկներով, լաւագոյն, ճահաւորագոյն և օգտակարագոյն կը լինէր, եթէ ունին՝ լաւ, եթէ չունին, ընդունակ երկտառագրութիւնէն ընտրանօք ուղարկելին Եւրոպայի Պրոֆեսսորների մօտ, հիմնական և ընդարձակ կերպով ուսումնասիրելու Հայ լեզուի ծննդաբանութիւնն, զարգացումն, և ապրած հոգեբանական և ընկերական կեանքը դարերի ընթացքի մէջ։ Նախ ինչ է բառը, ինչպէս կը կազմուի, ինչպէս կը ծնանին և կը մեռնին և կամ կը կերպափոխուին։ Այդ մերոյով մենք պիտի հասկանանք մեր երկրի լեռների, գետների, լճերի և դաշտերի անունները. որոնց անունով կոչուած են, և այդ անունների ալ սկզբնաւորութիւնը, և ինչպէս կը փոխեն իրենց նշանակութիւնը. ինչ ասել է լեզուի մաքրութիւն, և յորժմ կը կայանայ. զոր օրինակ մեր ոսկեղարեան լեզուի մաքրութիւնն, այսպէս կան հարկաւոր հարցեր լուծելու։ Եթէ իոյճի մտք «ուղղագրութեան» հեղինակներն ուսումնասիրած լինէին այս ոճով Հայ լեզուն, զրական և պատմական, կենցաղական և քաղաքական պարագաներով, պիտի զբաւէին . որ միակողմանի ուղղագրութիւն արժանի է ամենայն յարգանքի և ակնածութեան, և անոր պիտի մօտենային իբրև Հայ մտքի սրբութեան տաճարին, որ իմաստասիրական կշռադատութեամբ, թուա-

բանական ճշգրտութեամբ կատարուած գործ մ'է՛, որուն հաւան գտան բոլոր բովանդակ Հայաստանի կղերական և աշխարհական դասն, յորոց շատերն ուսած էին յունական դպրոցներում. նոքա ասեմ, սքանչացած Ս. Սահակի կատարած մեծ գործի վերայ, անկեղծութեամբ խոստովանում են թէ՛ «Մէք ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ ԱՐՈՒՅՍԱՍՈՐ ՈՒՍՄԱՆՆԻ»։ Երանի թէ ճշմարիտ գիտականի համեստութեամբ թ. Հայաստանի Ուս. Ընկերներն խոստովանէին նոյնպէս անկեղծութեամբ թէ մենք զեռ չկարողացանք հմուտ լինել և տեղեկանալ լեզուական արուեստաւոր ուսմանն, վասն որոյ սխալեցանք Ոսկին մաքուր՝ թուխ կապարի հետ փոխելով Հարկաւոր է այստե՛նտ և թ. Հայաստանի կառավարութեան Հայկական Համալսարանի մէջ մի աթոռ յատկացնել լեզուարանութեան բարձր դասընթացքի, որուն բնարանն լինի դասախօսել՝ Հայ լեզուի ԲԱՌԵՐԻՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ։ Եւ այն ատեն յուսամք չստեն իրենց համոզման, իրենց խզճի ձայնին թէ իրենք ևս մարտիրոս ազգի զաւակներն են, իրենց ալ սեպուհ պարտականութիւնն է սիրել իրենց սեփական հայրենիքն՝ Հայոց տունը, որ թ. Հայաստան կոչուում է, սիրել իրենց արեւակից ժողովուրդն որ գաղութներում տանջուում է, սիրել այն ազգը որի ծնունդ են և իւր հինգհազարամեան հնութեամբն կը պարծի։ Սիրել Եկեղեցին, որ իւր մայր և դայեակ պահեց և փրկեց Հայ ժողովուրդի գոյութիւնն։ Նա տաճահինգ դարերու բարձրաբերձ և ուճասաղարթ մի ծառ է, որի հովանին զեռ շատ ժամանակ հարկաւոր է Հայ ազգին։

Երան՛ արմատով ծառ, տունն հիմամբն է տուն Մուրանայք գերկիրդ ու զազգըդ սիրուն։
Երան՛ արմատով ծառ, ծառովն է արմատ.
Դալար մանկաթի, ձեր տակն է Արարատ.
Պինդ կացե՛ք, Աստուած ցօղ է ի վերէն,
Մէք ու ծաղկե՛ք քանց վարդ ի թփէն....
Ուր իւր սիրով կան զինչ աղբրիկք
Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկ։

Հ. Գ. Ն.

ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ» ՈՒՆ՝

(Շաբ. տես Բազմ. 1927 էջ 105)

Ի. Գ. — Քառադէսն (Ա. Ռտ. էջ 154).

Պ. Աճառեան Նարեկացւոյն այս բարդ կ'ուզէ որ Փառադէսն սրբագրենք. Ոչ. շատ լաւ գրուած է. նշանակութիւնն ալ այս է. Դի աշխարհաբար կողմ ըսել է. հմմ. ասդիս, անդին, մէկդի, չորսդին ևն. Փառադէսն կամ քառադիսն գետ՝ ըսել է գետ մը որ դէպի չորս կողմ կը բաժնուի։ Ս. Գրքի բացատրութիւնն է, զոր ինքը տարբեր կերպով կը գրէ. հմմ. Նոն. Բ. 1⁰ «Էւ գետ ելանէր յեղեմայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ի չորս առաջս = քառադի, քառադէսն գետ։ Խօսքը Եկեղեցւոյ վրայ է՝ գոր դրախտի կը նմանցնէ. Ուստի մութ կարծուած տողը սապէս կարելի է թարգմանել. «Էս յայն՝ քառադէսն գետն վտակ քոյնեկայր» = «Էս անոր մէջ (Դրախտին, Եկեղեցւոյ) չորս ասալ ունեցող գետը՝ վտակը՝ կը քոյնեկայր»։

Ի. Ե. — Բաղլի (էջ 157).

Կամ՝ քաղտի կեանք. եթէ խանգարուած գրութիւն մը չէ, կ'ըսէ, «պէտք է հասկընալ (զայս) գէշ, չարաբախտ, չար»։ Գրութիւնը խանգարուած չէ, սակայն «Նոր բառեր»ու հեղինակը լաւ չէ հասկցած գայն։ Ղ և ի, դ և ա գրելը լծորդ են, որով՝ բախտ կամ քաղտ նոյն բանն է։ Բաղլի կեանք հոս կը նշանակէ բախտաւոր, երջանիկ կեանք, սովորական բացատրութիւն մ'է։ Ուստի «Առաւել սքանչանամ ընդ այնս որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբաղտի (զբախտի) կեանս նոցա», կարելի է թարգմանել. «Աւելի անոնց վրայ կը զարմանամ, որ իրենց կեանքը կա-

1. Հր. Աճառեան. Տպ. Վենետիկ Ա. հտ. 1913. Բ. հտ. 1926.